# Էական տեղեկությունների բացահայտում

Արժեթղթերի շուկայի մասին ՀՀ օրենքի 127-րդ գլխի և ՀՀ ԿԲ 4/04 կանոնակարգի 23-րդ հոդվածի պահանջներին համապատասխան ստորև ներկայացնում ենք տեղեկատվություն, որը կարող է էական դիտարկվել «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ կողմից թողարկված պարտատոմսերում ներդրում կատարած անձանց համար.

**28 հոկտեմբերի 2009թ.**

2009 թվականի նոյեմբերի 6-ին կկայանա «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը:

**29 սեպտեմբերի 2009թ.**

Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ խորհրդի կազմում տեղի ունեցած փոփոխություն.

- Օգոստոսի 5-ին «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ խորհրդի անդամի պաշտոնում նշանակվել է Գայ Լյուիս Պարիկը: Նշանակումը գրանցվել է ՀՀ ԿԲ 29/09/2009 թվականի թիվ 1/1242Ա որոշմամբ:

**07 սեպտեմբերի 2009թ.**

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ ղեկավարների կազմում տեղի ունեցած փոփոխություն.

- ՀՀ ԿԲ 07/09/2009 թվականի թիվ 1/1121Ա որոշմամբ Ռուզաննա Շահինյանը հանվել է բանկի գլխավոր գործադիր տնօրենի տեղակալի պաշտոնում գրանցումից:

**02 սեպտեմբերի 2009թ.**

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ կանոնադրությունում և կանոնադրական հիմնադրամում տեղի ունեցած փոփոխություններ:

Օգոստոսի 5-ին կայացած «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը որոշեց.

- Հաստատել Բանկի կանոնադրական հիմնադրամի չափի ավելացումը՝ Բանկի չբաշխված շահույթից 5 118 960 000 (հինգ միլիարդ հարյուր տասնութ միլիոն ինը հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ գումարը փոխանցելով կանոնադրական հիմնադրամ, որի արդյունքում Բանկի կանոնադրական հիմնադրամի չափը կկազմի  7 556 560 000 (յոթ միլիարդ հինգ հարյուր հիսուն վեց միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, իսկ Բանկի յուրաքանչյուր բաժնետոմսի անվանական արժեքը կավելացվի և կկազմի 12 400 (տասներկու հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:
- Բանկի կանոնադրական հիմնադրամի չափն ավելացնելու կապակցությամբ կատարել փոփոխություններ Բանկի կանոնադրության 3.1, 3.2, 3.5 և 3.6 կետերում՝ նշված կետերը վերաշարադրելով հետևյալ խմբագրությամբ.

  «3.1.Բանկի հայտարարված կանոնադրական հիմնադրամը կազմում է 7 556 560 000 (յոթ միլիարդ հինգ հարյուր հիսունվեց միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:

  3.2. Բանկի հայտարարված կանոնադրական հիմնադրամը բաժանված է 609 400 (վեց հարյուր ինը հազար չորս հարյուր) սովորական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 12 400 (տասներկու հազար չորս հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով:

  3.5. Սույն կանոնադրության վերագրանցման պահին բաժնետոմսերը լրիվ վճարված են բաժնետերերի կողմից, և Բանկի փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամը կազմում է 7 556 560 000 (յոթ միլիարդ հինգ հարյուր հիսունվեց միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:

  3.6. Բաժնետոմսերը Բանկի բաժնետերերի միջև տեղաբաշխված են հետևյալ կերպ.

  - Էյչ-Էս-Բի-Սի Յուրըփ Բի.Վի.՝ 426 580 (չորս հարյուր քսանվեց հազար հինգ հարյուր ութսուն) սովորական բաժնետոմս, որի համար վճարվել է 5 289 592 000 (հինգ միլիարդ երկու հարյուր ութսունինը միլիոն հինգ հարյուր իննսուներկու հազար) ՀՀ դրամ, և

HSBC

Ձեր բանկն ամբողջ աշխարհում

- Ուինգս Իսաբլիըմենք՝ 182 820 (հարյուր ութսուներկու հազար ութ հարյուր քսան) սովորական բաժնետոմս, որի համար վճարել է 2 266 968 000 (երկու միլիարդ երկու հարյուր վաթսունվեց միլիոն ինը հարյուր վաթսունութ հազար) ՀՀ դրամ»:

- Հաստատել Բանկի կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ ներառելով կատարված փոփոխությունները:

Վերը նշված փոփոխությունները գրանցվել են ՀՀ ԿԲ 02/09/2009 թ-ի թիվ 1/1112Ա որոշմամբ:

**25 օգոստոսի 2009թ.**

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ խորհրդի կազմում տեղի ունեցած փոփոխություն.

- Օգոստոսի 5-ին վաղաժամկետ դադարեցվել են «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ խորհրդի անդամ Էնթոնի Քոլին Թերների լիազորությունները: ՀՀ ԿԲ 25/08/2009 թվականի թիվ 1/1077Ա որոշմամբ Էնթոնի Քոլին Թերները հանվել է խորհրդի անդամի պաշտոնում գրանցումից:

**05 օգոստոսի 2009թ.**

2009 թվականի օգոստոսի 5-ին տեղի է ունեցել «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը:

**10 հունիսի 2009թ.**

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ խորհրդի կազմում տեղի ունեցած փոփոխություններ.

- Մարտի 9-ին «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ խորհրդի անդամի պաշտոնում նշանակվել է Էնթոնի Մահոնին: Նշանակումը գրանցվել է ՀՀ ԿԲ 10/06/2009 թվականի թիվ 1/733Ա որոշմամբ:
- Մարտի 9-ին «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ խորհրդի անդամի պաշտոնում նշանակվել է Սթիվեն Փրեսը: Նշանակումը գրանցվել է ՀՀ ԿԲ 10/06/2009 թ-ի թիվ 1/733Ա որոշմամբ:

**03 հունիսի 2009թ.**

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն որոշում է կայացրել ժամանակավորապես դադարեցնել (մինչև 03 Հունիսի 2010թ.) բանկի հետևյալ մասնաճյուղի գործունեությունը.

- Կոմիտաս 1, տեղակայված ք. Երևան, Կոմիտասի պողոտա 47 հասցեում

Բանկի մասնաճուղի գործունեության ժամանակավորապես դադարեցումը գրանցվել է ՀՀ Կենտրոնական Բանկի 03/06/2009 թ-ի 1/699Ա որոշմամբ:

**02 հունիսի 2009թ.**

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն որոշում է կայացրել դադարեցնել բանկի հետևյալ մասնաճյուղերի գործունեությունը.

- Վեգա 1, տեղակայված ք. Երևան, Նալբանդյան փողոց 9/30 հասցեում
- Վեգա 2, տեղակայված ք. Երևան, Կոմիտասի պողոտա, 37/1 հասցեում

Բանկի մասնաճուղերի գործունեության դադարեցումը գրանցվել է ՀՀ Կենտրոնական Բանկի 02/06/2009 թ-ի 1/690Ա որոշմամբ:

**27 ապրիլի 2009թ.**

2009 թվականի ապրիլի 27-ին տեղի է ունեցել «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը: